

ՇՈՎԱՆ



Դ. Տարի, Թիւ 10, Հոկտեմբեր 1, 1930

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԳՇՈՑ ԾՕՎԱՌ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 920 N. Hoyne Ave., Chicago, Ill.

ԵՐԱԶ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ լաւ կ'ըլլար, եթէ չորս հոգիներուն ցրուած Չնգուշ-
ցի հայրենակիցներ մէկ վայրի մէջ ամփոփուէին ու ապրէին
բարեկեցիկ կեանք մը. ի՞նչ հիանալի պիտի ըլլար, եթէ մեր
բոլոր հայրենակիցները, 18 տարեկանէն վեր, Վերաշինա-
կանի անդամ ըլլային եւ եռանդով ու խելացութեամբ դուր-
ծէին. ի՞նչ պատուական պիտի ըլլար, եթէ մեր մէջ քէն,
վէճ, անհամաձայնութիւն եւ երկպառակութիւն չըլլային (եւ
ի՞նչ պէտք կ'այ տանոց). ի՞նչ բախտորոշ ժամանակ մը պի-
տի ըլլար, եթէ մեր զպրօցականները քէնի մը հայրենաստի-
րութիւն եւ քէնի մըն ալ ջիւղ ունենային (բացառութիւնները
յարդի են) եւ դուրծի մղուելով քէն մըն ալ իրենց փափուկ
մարմինները նեղէին իրենց տարաբախտ հայրենակիցներուն
ծով ցաւերը մեղմացնելու համար. ի՞նչ հրաշալի պատմու-
թիւն մը պիտի գրուէր, եթէ բոլոր մեր հայրենակիցները
նիւթական եւ բարոյական ամէն ոյժ ի սպաս դնէին նոր ու
փառաւոր Չնգուշ մը շինելով Հայաստանի հողին վրայ —
կրթական եւ առեւտրական արդիական ամէն ստուերութիւն-
ներով օժտուած — եւ մեր բոլոր սրբերն ու ոչ-ունեւոր հայ-
րենակիցները պատուարուէին պատուաւոր ընտանիքի մը
ղաւազներուն պէս լաւ կերակրուած՝ լաւ հագուած. ի՞նչ
պատուական բան պիտի ըլլար, եթէ բախտաւոր հայրենա-
կիցներ Նոր Չնգուշի փողոցներէն ուրախ գուարթ աղաղակ-
ներով ողջունէին իրենց պանդուխտ հայրենակիցներուն վե-
րադարձը եւ Նոր Չնգուշի նոր սերունդը մեծնար հին Չըն-
գուշի անուշիկ աւանդութիւններով ու Նոր Չնգուշի ոգւով
կրթուէր ու յառաջդիմէր լուսաւոր դարու մը արժանաւոր
ղաւազները ըլլալով. ի՞նչ սրտի դոհունակութեամբ պիտի
գիմէինք մեր յարգանքները մատուցանելու մեր նախնիքնե-
րուն՝ երբ փառաւոր արձաններ եւ յիշատակարաններ կա-
ռուցուած ըլլային անոնց խնկելի յիշատակներուն եւ մխի-
թարուէինք ըսելով. — Հին Չնգուշը զոհ գնաց արիւնաբերու-
ցիդի մը վայրագութեանց, բայց անոր մնացորդ գաւազները
ապացուցին իրենց պատմական աննուաճ ոգին եւ կերտեցին
նորը, աւելի չքեղ, աւելի հարուստ եւ աւելի ազատ: Եւ վեր-
ջապէս կան ըսողներ. — Ա՛խ, եթէ ես ամուսնացած չըլլայի,
ընկերութեան բոլոր գործերը ես կ'ընէի. ա՛խ, եթէ ես հա-
րուստ ըլլայի, Նոր Չնգուշը բոլորովին իմ ծախքովս շինել

կուտայի եւ կը յանձնէի հայրենակիցներուն: Եւ այսպէս
չառ մը հառաչանքներ: Բայց այս «եթէ» բառը տնաքանդ
բառ մըն է: Վայ անպիտան «եթէ», եթէ դուն գոյութիւն
չունենայիր, մենք տարբեր արարածներ էինք հիմա: Եւ սա-
կայն կրնայ շարունակուիլ շարքը այս երազներուն, որոնք
ոչ վերջ ունին եւ ոչ ալ վախճան:

Բայց պէտք է քիչ մը քաջութեամբ տեսնենք իրականու-
թիւնը եւ ըմբռնենք թէ պոլիկ դործ մը շատ աւելի փառա-
ւոր ու չքեղ է, քան մեծ բայց խարուսիկ երազներ:

Կաթիլներ՝ աւաղաններ կը կաղմին, ինչպէս կամաց
կամաց տրուած տոլարները կրնան հազարներ դոյացնել:
Երբ հինգ տուններ շինելու կարողութիւնը կ'ունենանք, տա-
նք տուններ շինելը շատ աւելի դիւրին կը դառնայ: Եւ երբ
աղնիւ նպատակ մը դուրծի կը վերածուի, անոր տեսքի յա-
փըշտակութենէն թոյլերը կը դորանան, թերահաւատները
ուխտակներ կը դառնան, նոյն իսկ մեռած մարդիկ (յոյսով
մեռած) հոգի կ'առնեն վերստին:

Պէտք է ընդունիլ թէ սեւէ կաղմակերպութիւն կատար-
ելով է՛ եւ աշխարհի ամէն մէկ կողմ ընկերային գործեր չա-
րունակ կը բախին հակամարտ ուժերու, վէճի եւ ընխադրե-
րութեան: Սակայն ամէն ինչ իրեն չափն ու սահմանը ունի
անշուշտ: Վերաւորանք եւ մրտադրութեան վարձատրութեան
մաս կը կաղմին անձնուէր եւ դործող մարդոց համար, ի փո-
խան իրենց անկեղծ ծառայութեանց, որովհետեւ գժբախտա-
բար ժողովուրդի հոժ պանդուխտ կարճատես է: Ան չտես-
ներ դործը մինչեւ որ իր աչքին առջեւ ամբողջացած չըլ-
լայ: Այն տանի միայն ան՝ երախայի մը պէս կ'ոգեւո-
րուի եւ կը պարէ:

Վերաշինականը արդէն գործնական ճամբու մէջ է Նու-
պարաշէնի մէջ Նոր Չնգուշ անուն թաղ մը շինելու: Ասիկա
ոչ միայն կարելիութեան սահմանին մէջ է եւ երազ չի պա-
րունակիր իրեն մէջ, այլ եւ մեր Չնգուշցիութեան նիւթա-
կան ուժին թերեւս մէկ հինգերորդ մասը հաղիւ կը կաղմէ:

Բայց եւ այնպէս տնհրաժեշտ է մեզի համար մեր ընկե-
րութիւնը մեթոտաւոր ընել եւ դարձնել զայն ա՛լ աւելի դո-
րաւոր եւ օգտակար: Մասնաճիւղեր պէտք է Կեդրոնին հրա-
հանքներուն անտան փութով եւ գործակցին անոր: Կեդրոնը
պէտք է ուղղութիւն տայ, հրահանգէ, թելադրէ եւ ազդեցիկ
ըլլայ: Ժողովուրդին նիւթական եւ բարոյական կարողու-
թիւնները ստատմասիրելով, ոչ մէկ լուծի տակ դնելու է

դասին եւ ոչ ալ թողլ տալու է որ անոր մեծ մասը իր պարտա-
կանութեանց մէջ թերանայ:

Պէտք է անհամբեր ըլլանք եւ ստուգենք յաւան-
դու մեր փափաքը պէտք է շարժառնենք: Հաւատանք յա-
րատեալ քաղելու, արագութեամբ յառաջդիմելու սկզբուն-
քին: Ոստումը շուտ կը յաջնանք մեզ, բայց քաղելը, թէեւ
քիչ մը դանդաղ, սակայն չի յաջնանք եւ գործելը հաճելի
կը դարձնէ:

Անշուշտ պարզ գիտելիքներ են ասոնք եւ ամէն մարդ
շատ անգամ լսած է ասանկ խորհուրդներ, բայց քիչեր կը
կատարեն: Մեծ գործեր պարզ կարծուած օրէնքներու կի-
բարկումով կատարելագործուած են: Վիճիլը եւ փաստաբ-
կութիւնը վերջ չունի: Ա՛լ գործելու վարժեցնելու ենք ինք-
զինքնին, ընդունելով նաեւ անոր պատճառած տգեղութիւն-
ները՝ ինչպէս կ'ընենք մեր անձնական գործերուն մէջ:

Ուրեմն, դադարինք երազներով օրօրուելէ: Դառն իրա-
կանութիւնը եւ յարատեւ աշխատութիւնը աւելի յոյս եւ
վարձատրութիւն կը պարունակեն:

ՍԽՄՈՆ

Ֆիլատէլֆիա, Սեպտ. 9, 1930

ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐԱՇԽՆԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

Զնգուշի վերաշինաց Միութիւնը իր գոյութենէն ի վեր
ամէնէն իմաստուն քայլը առաւ, երբ իր ծրագրին իրակա-
նացման հարցը կապեց Հ. Բ. Ը. Միութեան գործին հետ:
Մենք որ յաճախ յարաբերութեան ու շփման մէջ ենք մեզ
նման ընկերութիւններու, այսինքն Մալաթիոյ, Սարգիսի
եւ Արարիկի Միութեանց վարիչներուն հետ, շատ լաւ գի-
տենք թէ անոնք որքան ծախքերու եւ զժողարութիւններու
կ'ենթարկուին իրենց երկրացիները Հայաստան փոխադրելու
եւ այլ գործերու մէջ: Մինչդեռ մեր Միութիւնը իր Զնգուշ
թաղը Նուպարաշէնի մէջ շինելով, զերծ պիտի ըլլայ այս
կարգի զժողարութիւններէ, քանի որ Նուպարաշէնի վար-
չութիւնը, երբ քաղաքը լրանայ, մեզի պիտի տայ ամէն զիւ-
րութիւն:

* * *

ԻՅ ՄԸՆ ԱՆ ՄԵՆԻ ՄԵՁԻ ՀԱՄԱՐ

Ուրախ ենք որ Զնգուշին ամէն տեղ լաւ անուն ձգած է:
Իր նիւթական եւ բարոյական գոհարութիւնները ցոյց տուած
է ունէ աղագային գործի մէջ: Ասիկա պատիւ մըն է մեզի-
բայց երեւոյթները այսպէս չեն երբ խնդիրը մենք մեզի հա-
մար աշխատելու մէջ կը կայանայ: Այսօր ունինք միայն մէկ
ընկերութիւն մը, եւ այդ է Զնգուշի վերաշինաց Միութիւնը,
որ պէտք է մեր գուրդուրանքին առարկան դառնայ, քանի
որ անոր միջոցաւ է որ պիտի նուիրագործենք Զնգուշի նե-
րու հին եւ նոր յիշատակները եւ դարձեալ անոր միջոցաւ է
որ օգտակար պիտի ըլլանք Զնգուշի պարտաւոր է իր նիւթական
եւ բարոյական օժանդակութիւնը բերել երկրի վերաշինու-
թեան գործին:

Կեդր. վարչութիւնս սրտած է իր նախաձեռնութեամբ
կարգ մը լուսարանական ժողովներ սարքել Նիւ Եորք, Լո-
ս-Անջելոս եւ Ֆիլատէլֆիա, առիթ ստեղծելով որ տեղւոյն վրայ
խօսուին եւ լուսարանուին գոյութիւն ունեցող հարցերը:
Այս ժողովներուն նպատակը պիտի ըլլայ, բնականաբար,
իրերահասկցողութիւն եւ ներդաշնակութիւն ստեղծել ա-
մենուրեք:

Առաջին ժողովը պիտի դաժարուի Նիւ Եորքի մէջ, Հոկ-
տեմբեր 5, Կիրակի օր: Յայտարարութիւնը տեղւոյն վրայ

Այն հայրենակիցները, որոնք ունէ խնդրոյ չունեն
փափաքին հարցում ընել եւ լուսարանութիւն ստանալ, կը
նան դիմել Կեդրոնի քարտուղարին հասցէով՝ A. Minasian
574 17th St., West New York, N. J.

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻԿ

ՏԻՐՈՅ ՄԱՄԱՆ

Տիրոյ Մաման: Այս անունով կը կոչէինք զինք Զնգուշ
մէջ: Պաշտեաններու հետ աղագայական կապ ունէր կա-
ծեմ, եւ շատ անգամ կը յաճախէր անոնց:

Այն ատեն մենք Պաշտեաններու վարձակալն էինք, այ-
րիկ պատճառաւ շատ կանուխէն ճանչցայ զինքը:

Ժողովարանի վրայի տունը կը բնակէր: Տունը երկու
սենեակէ կը բաղկանար, աւելիին պէտք չունէր արդէն, ք-
անի որ առանձին էր, զաւակները Սարգիսի կ'ուսանէին:

Ինձ ալ վիճակեցաւ գիշեր մը մնալ այդ պարզուկ յար-
կին տակ: Պարպատեաններէն մէկը կ'ամուսնանար, ասանկ
իրեն գրացի էին, մենք ալ տնայիններով հարսանիքի դաշ-
տէնք. հազիւ վեց տարեկան կայր, տեսայ որ կին մը ձեռքի
բռնած ուրիշ տեղ մը կը տանէր զիս: «Եկուր հազաւ, քե-
տանիմ ձեռքիդ հինայ գնեմ, որ եաղաւան վրայ իկնի»:

Եաղալային ինչ ըլլալը չէի գիտեր, սակայն հինայ դրու-
րու փափաքով ուրախութեամբ իրեն հետեւեցայ:

Զեռքերս քուրջի կտորներով փաթկուած էին, այսինքն
հինայի գործը լրացած էր, սրմէ վերջ Տիրոյ Մաման զի-
նք իր տունը տարաւ, եւ այդ օրն էր որ իր յարկին տակ քե-
ցայ:

Յաջորդ առաւունս երբ արթնցայ, անկողինը բոլոր-
ներկուած էր ձեռքիս կապերը քակուած ըլլալուն պատ-
ճառ, բայց ոչ մէկ յանդիմանութիւն լսեցի իմէ, ընդհա-
մակը ձեռքերս լուսալու գրադած միջոցին բարութեամբ
կ'ըսէր. «Տեսար հիմա ինչիս ոտակ է, ձեռքիդ ինչիս կա-
միր է ըզեր»:

Ժամանակ մը վերջ մեկնեցաւ Երուսաղէմ իր երէց որդ-
ւոյն քով, եւ զինադադարէն վերջ Ամերիկա եկած էր: Առա-
ջին անգամ Լօրէնս տեսայ զինք. հարցուցի թէ զիս կը ճան-
նաս. «Վախ իմ արեւուս, ինչիս չեմ ճանչնար, գուն Ա-
սիական (մօրս կ'աղանաղէր) Մ. Ն. Լ. չէ»: Եւ քակեց յիշող-
ութեան ծրարը, սկսաւ խօսիլ Իսպիր քուրուկին, Պերթոյ Պ-
պիլին (Նկատ Պաշտեան), մօրս եւ ուրիշ ծանօթներու վրայ:
Եւ նոյն իսկ ձեռքս հինայ գնելու պարապան յիշեցուց:

Ատիկէ վերջ մէկ քանի անգամներ տեսայ զինք, վերջին
անգամ Յուլիս Եին տեսայ, որ հիւանդանոցէն տուն եկած
էր, քանի մը բնկերներով ալցելութիւն մը տուինք իրեն:

Յայտնի էր թէ ատոյթութիւնը տեղը չէր, սակայն խօսե-
լու տրամադրութիւն մը ունէր, բոլորը անցեալին վերաբե-
րող, նորէն վերջիւնց վերի անունները. «Անոնք արդար
չաղաւ, Աստուած իր սիրածները տարաւ, եւ մեղաւոր
թէ չէ եւ այ կը տանէր, լոս իջնայ անոնց գերեզմանին վ-
րայ»: Տարիներու ծանրութիւնը բնկած էր զինք եւ մա-
հուան կը բաղձար:

Որքան ալ նախապաշարաւ տեսներ իր բռնած մէկ
հաւատքի գորաւոր զգացումը չենք կրնար անտեսել, եւ վա-
տահ ենք թէ մինչեւ վերջին չունէր այդ հաւատքին փաթ-
ցաւ, եւ Աստուած սիրեց զինք:

Այս՝ Աստուած սիրեց քեզ եւ քու բոլոր ծանօթներդ
սակայն դուք բոլորը շատ աւելի սիրեցիք Զինքը: Երանիք

Այն ձեր սիրտին քիչ մը ուշ փոխարինէր, եւ մենք ձեր դուրս-
դուրանքը վայելէինք:

Եւ այժմ քու հոգիդ ալ միացաւ անոնց, եւ բոլորդ միա-
սին արդարեանքու հոյլ մը կը կազմէք: Արդար էք բոլորդ ալ,
քանզի ձեր կրած տառապանքը ձեր քառութիւնը եղաւ ար-
դէն:

Աւա՛ղ որ ալ պիտի չլսենք ձեր պատմածները հայրենի
անուշ կեանքէն, որ Չնդուշի բարբառով աւելի հաճելի կը
հնչէր: Այսօր քու յիշատակը թարմացնելու համար քու իսկ
բարբառովդ կուզամ ըսել քեզ՝ ԼՈՍ ԻՋԵԱՅ ԳԵՐԵՉԱՄԱՆԻԴ-
ՎՐԱՅ ՏԻՐՈՅ ՄԱՄԱ:

ՄԷՆ ՍԷ ՅԻ

ՃԱՄԲԱՆԻՍ ՄԱՔՐԵՆՔ

«Ծօլառ»ի Յուլիս 1 թիւով հրատարակուած «Միայն
Հայաստանի մէջ» խորագրով յօդուածը շատ յստակ եւ տրա-
մարանօրէն պատմած էր. այս առթիւ գովելի է յօդուածա-
գիրը:

Ամէն անոնք որ Չնդուշի յաւերժացման համար կ'ուզեն
աշխատիլ, այդ ուղղութեամբ պէտք է մտածեն, եւ այս
զապաւարը պէտք է արմատացնեն իրենց մտքին մէջ, որով-
հետեւ Հայաստանէն դուրս Չնդուշ մը հիմնել պարտաւ աշ-
խատութիւն պիտի ըլլայ:

Ուրախ ենք որ մեր ունեցած այդ յոյսը պրական ճամ-
բու մէջ մտած է, եւ մօտ ատենէն իրականացած պիտի տես-
նենք:

Բարեգործականի հետ Վերաշինութեան կողմէ կ'զած
համաձայնութիւնը մեր ունեցած յոյսին կատարեալ երաշ-
խօքն է, ասոր հակառակը պնդել՝ Նոսպարաշէնի կառույց-
ման եւս չհաւատալ պիտի նշանակէ:

Անշուշտ կան այնպիսիներ որոնք չեն հաւատար կամ ա-
ւելի շիտակը՝ չարամտօրէն չեն բաղձար անոր իրականաց-
ման, եւ միշտ կ'ուզեն մտքերը պղտորել, սակայն տրամա-
բանող մարդը կարեւորութիւն չի տար այդպիսիներուն:

Փաստը մէջտեղն է. Երեւանի մէկ քանի անուղղաները
տակէ քանի մը տարի առաջ փորձեցին ձախողեցնել Վերջ.
Միութեան դործը, սակայն ոչ ոք հետեւեցաւ անոնց: Ծամ-
բուն վրայ խոչընդոտ հանդիսացող քարեր էին ասոնք, մաք-
րուեցան մէջտեղէն եւ Միութիւնը կը քալէ:

Անշուշտ անոնք ամէն ճիշդ պիտի թափեն համախոհներ
ունենալու, որպէս զի արդեւ հանդիսանան Միութեան ձեռ-
նարկին, սակայն ողջմիտ Չնդուշիներ երբեք ուշադրութիւն
պիտի չընծայեն անոնց պառաւական խօսքերուն:

Ուել ճամբորդ ճամբուն վրայ քարեր գտնուելուն պատ-
ճառաւ ետ դառնալու որոշում չի տար, այլ ընդհակառակը
զանոնք մէկտեղ ընելով կը շարունակէ իր ճամբան:

Հետեւաբար մենք ալ որպէս ճամբորդներ մեր պարտա-
կանութեան ճամբուն վրայ, առանց յուսահատելու քարերէն
ու խռթերէն, աշխատինք թէ՛ մէկ կողմ նետել զանոնք եւ
թէ՛ շարունակել մեր ճամբան:

Տ. Ղ. Բ.

ԿԱՐԵՒՈՐ

Վերաշինաց Միութեան Պէյրութի մասնաճիւղին 629
B. O. Postale հասցէով մեր զրկած Պատգ. Ժողովի ար-
ձանագրութիւնը ետ վերադարձած է՝ հասցէն սխալ ըլլալուն
պատճառաւ, աւելցնենք նաեւ որ նոյն հասցէով զրկած ենք
չըջարեւակա՛նը եւսայն:

Այս պարազան Պէյրութի մեր մասնաճիւղի ուշադրու-
թեան յանձնելով՝ կը փափաքինք որ իրենց ճիշտ հասցէն
զրկեն մեզի:

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԳՈՅ ԱԶՔԵՐՈՒՆ ԵՒ ԱԿԱՆՁՆԵՐՈՒՆ

Անուրանալի է որ ունինք կարգ մը հայրենակիցներ,
որոնք աչքերնին կը դնեն շտեմնելու եւ ահանջնին կը խթեն
չլսելու Նոր Չնդուշի համար կատարուած աշխատութիւննե-
րու եւ զոհողութիւններու մասին: Անոնք հանդիստ սրտով
կը դիտեն հայրենակիցներու միայն մէկ մասին զոհաբերու-
թիւնն ու աշխատանքը, որ իսկապէս գովելի է: Այս դոց աչ-
քերն ու ահանջները իրենց անտարբերութեամբ քսակնին մը-
նացած մէկ քանի տղարը թերեւս չա՛ մը կը համարեն ի-
րենց, առանց խղճահարութեան ու առանց մտաբերումի որ
իրենք ալ զոհաբերողներուն հետ որպէս Չնդուշիներ հա-
ւատար գետնի վրայ կը մնան:

Եթէ այսօր այդպիսիներու խիղճը քար է, չի թուլատրեր
իրենց որ բանան աչքերնին տեսնելու համար թէ ուրիշներ
ի՛նչպէս իրենց պարտականութիւնը չարկած են ու արիօրէն
յառաջ կը տանին Վերաշինացի ծանր դործը, որ իրենց ալ
կը պատկանի հաւասարապէս: Սակայն մենք վստահ ենք որ
պիտի դա՛յ օրը երբ իրենց խիղճը կակծալով պիտի ստիպէ որ
բանան իրենց դոց աչքերն ու ահանջները, տեսնելու եւ լսե-
լու թէ իրենք որքան պղտրիկ մնացած են հայրենաշինական
դործին մէջ՝ իրենց անտարբերութեամբ:

Այսօր բոց աչքը ու ահանջը հայրենակից, որ դուն զքեզ
մեծ զգաս զոհաբերողներուն հետ, մի թողուր վաղուան, որ
յետոյ անտարբերութեանդ երեսէն պղտրիկնաս եւ ինքզինքէդ
սմճնաս: Հայրենաշինութեան նուիրումովդ ուրախ եւ եր-
ջանիկ կեանք մը կ'ունենաս եւ ընկերութեան մէջ ճակատա-
բոց դիրք մը պրաւելով կուրծքդ միշտ ուռած ու ինքզինքդ
հանդարտ կը զգաս: Ուրեմն հետաքրքրուէ Վերաշինացին
դործով եւ նուիրուէ անոր, չինէ՛ դուն քու առնդ:

Ֆրէգմօ

ՃԱՆ ԱՇՏԱՐԱԿԵՆՅ

ԳԵՂԵՑԻԿ ԳԱՂԱՓԱՐ

Վալանսի հայրենակիցներէն Պրն. Թիւրօեան «Ծօլառ»ի
մէջ յօդուածով մը կ'առաջարկէր որ Մարտէյլի մասնաճիւղ-
ը հանդանակութեան մը սկսի ի նպաստ Նոր Չնդուշի կա-
ռուցման, որուն Թիւրօեան եղբայրներ պիտի մասնակցին
100 Փրանքով: Գեղեցիկ գաղափար է ասիկա, բայց ինչո՞ւ
սպասել որ Մարտէյլի մասնաճիւղը բանայ հանդանակութե-
անը, երբ արդէն Կեղրոնական Վարչութիւնը բացած է այդ
հանդանակութիւնը ու ամէն ոք ազատ է իր բաժին պարտա-
կանութիւնը բերելու բացումը հանդանակութեան:

Իրօք որ գեղեցիկ գաղափար է Պրն. Թիւրօեանի յայտ-
նածը, սակայն կը խորհինք թէ Մարտէյլէն առաջ Լօրէնսի եւ
Քալիֆօրնիոյ հայրենակիցները պէտք է իօսին, որովհե-
տեւ այս տեղերու մէջ արձագանդ գտած զրական դործը մեր
հայրենասիրական ոգեւորութիւնն ու նուիրումը պիտի
երկնապատկէ: Եւ ինչո՞ւ չէ, Մարտէյլն ալ իր կարողութեան
չափով իր մէկ քանի Փրանքները պիտի չխնայէ, հոգ չէ թէ
մեր հայրենակիցներուն նիւթական պարագան այնքան ալ
միտթարական չէ: Պէտք է խոստովանիլ որ այստեղէն շատ
բան ահնկալելու չէ, քանի որ բոլորս ալ ծանրաբեռնուած
ենք մէկ քանի պղտրիկներով ու ծանր է նոյն իսկ մեր ընտա-
նիքներուն հոգը մեզ համար: Նկատելու է նաեւ որ օրական
25—30 Փրանքի դործաւորներ ենք բոլորս ալ եւ այս պոմա-
րով հազիւ շատ համեստ ապրուստ մը կը ճարուի: Այսու
հանդերձ մենք մեր սանդիմներով պիտի կատարենք մեր
պարտականութիւնը:

Մարտէյլ

ՊԵՏՐՈՍ ՏԱՐՂՈՒՆԵԱՆ

ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՖԻԼԱՏԷԼՖԻԱ. — Պրն. Աւետիս Թուրմանեան, որ վերաբուժական գործողութեան ընթացիկում էր, այժմ կտտարեւապէս առողջացած է եւ իր գործով կը պարտադիր: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** **Տիկ. Գոհար Կ.** Թուրմանեան եւ իր վոքերիկը, որ արձակուրդի համար Պոսթոն գացած էին, քաղաքս վերադարձան: Բարի գալուստ կը մաղթենք:

*** **Տէր եւ Տիկ. Պ. Պօռոյեան,** որ իրենց բարեկամներուն այցելելու համար Նիւ Եորք մեկնած էին, քաղաքս վերադարձան: Բարի գալուստ կը մաղթենք:

ՇԻՔԱԿՕ. — **Տէր եւ Տիկին Ս. Եղոյեան** Սեպտ. 1-ին իրենց ինքնաշարժով այցելութիւն մը տուին Միլֆօքի մեր հայրենակիցներուն: Ժի քանի օր հոն մնալէ յետոյ քաղաքս վերադարձան:

*** **Օր. Էնա Կ.** Գույումեան հոգի ցաւով չարաթ մը տուն մնալ ստիպուեցաւ: Ուրախ ենք ըսելու որ այժմ յաւացած է ու կը շարունակէ իր դպրոցը:

*** **Պրն. Ս.** Թագուրեան իր երկարատեւ հիւանդութենէն ապաքինած է: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** **Տիկին Էօթէնի Սարգիսեան** չարաթ մը հիւանդ տնկողնոյ ծառայից: Ուրախ ենք որ այժմ լաւացած է:

*** **Պրն. Կ.** Եօթուրեան հիւանդութեամբ 10 օրէ ի վեր տուն կը մնար: Ուրախ ենք ըսելու որ այժմ յաւացած է:

Տ. ԲՈՒՆԵԱՆ

ՄԱՐՍԷՅԻ. — **Հայրենակից Տէր եւ Տիկ. Ս.** Եօթուրեան աղջիկ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** **Պրն. Սաչատուր Մաշուեան** աշխատելու ժամանակ ինկած եւ բաւական վնասուած է: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք:

*** **Մեր Ատիշի հայրենակիցը Պրն. Սարգիս Կիրակոսեան** Մարտի 1-ի մօտիկ զիւղէ մը հոս եկաւ իր քնէկալը աւուսնացիներու համար, եւ կատարեց չոր մը պարտականութիւնը: Իսկապէս գնահատելի էր Պրն. Կիրակոսեանի հոգածութիւնը: Մենք ի սրտէ կ'ուրախանանք իր այս ընթացքին համար, եւ կը շնորհաւորենք Տէր եւ Տիկ. Կիրակոսեանը, իսկ երջանիկ կեանք կը մաղթենք նորապսակներուն:

*** **Մեր պատուական հայրենակիցը Պրն. Յ.** Թէլօեան ամիս մը հիւանդ անկողնոյ ծառայիցէ յետոյ, ուրախ ենք ըսելու որ այժմ ապաքինած է:

*** **Տիկին Սարգիսեան** Չարմանեան Ամերիկա գտնուող իր տղայոց կարգադրութեամբ Ամերիկա մեկնեցաւ: Բարի ճանապարհ կը մաղթենք:

*** **Հայրենակից Տէր եւ Տիկին Վ.** Վարդանեանի երկու պղտիկները հարսանէթ ունեցան: Ուրախ ենք ըսելու որ երկուքն ալ ապաքինումի ճամբուն մէջ են:

*** **Նոյնպէս մեր հայրենակից Տէր եւ Տիկ. Յ.** Էկինեանի նորածին պղտիկը հարսանէթ ունեցաւ: Ապաքինում կը մաղթենք:

*** **Հայրենակից Պրն. Ս.** Բրուտեանի հօրեղբորդին Սամուէլ Բրուտեան վերջերս Յունաստանէն քաղաքս ժամանեց եւ մի քանի ամիս յետոյ անյայտացաւ: Հասցէն գտնողներէն կը խնդրուի իմացնել Պրն. Ս. Բրուտեանի:

ՃՂՂԱՄ ՄԸ. — «Ծօլաւ»-ի անցեալ թիւով դրուած Տարդունեանի փոքրիկներուն մկրտութիւնը պէտք է կարգաւ Եօթուրեանի փոքրիկներուն մկրտութիւնը՝ կնքահայրութեամբ Տարդունեանի:

Պ. ՏԱՐԴՈՒՆԵԱՆ

ՊԵՐՈՒԹ. — **Հայրենակից Սարգիս Աղնաւորեան** կողատապի հիւանդութեամբ Յունիս 26ին Ամերիկեան հիւանդանոցին մէջ աւանդեց իր հոգին: Հոգեհանգիստի եւ թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Հայր սուրբ Մարկոսեանի: Մարմինը ամփոփուեցաւ Մարաշիներու նոր գերեզմանատան մէջ:

Հանգուցեալը մօտէն կը հետաքրքրուէր հայրենակցական գործերով: Իր ետին կը թողու աշխին Տիկին Զապէլ եւ վեց տարեկան մանչը Կարապետ: Երկնային միւրթաբութիւն կը հայցենք իր տիկնոջ եւ բոլոր ազգականներուն որոնք Ամերիկա կը մնան, եւ իր քրոջս Գրն. Ս. Գուրուհեանի:

*** **Հայրենակից Տէր եւ Տիկ. Գ.** Մինակեան Ալէքսանդրէթէն քաղաքս ժամանեցին, ութ օր մնալէ յետոյ կրկին իրենց տեղը վերադարձան:

Ս. ԿԱԿՈԵԱՆ

ՖԻԼԶՆՕ. — **Տէր եւ Տիկին Զաքօ Սըրբեան** իրենց դուստր Զեփիլոյի հետ երկու շաբթուան արձակուրդով մեկնեցան Լօս Անճէլըս: Բարի վայելում եւ յաջող վերադարձ կը մաղթենք:

*** **Պրն. Մարտիրոս Տէր Ստեփանեան** դժբախտութիւն ունեցաւ իր սրունքը կտրելու աշխատելու պարագային երկու ամիս է որ հիւանդանոց կը գտնուի: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք:

*** **Օգոստոս 16ին Սան Ֆրանչիսքոյի մեր հայրենակիցներէն Պրն. Մ. Փափաճեան, Ա. Փիլոյեան եւ Զան Պապեան** այցելեցին Ֆրէշօ եւ աղբերակոյ հիւրասիրուցան Տէր եւ Տիկին Ասլան Սըրբեանէ, ուր ներկայ էին նաեւ Տէր եւ Տիկ. Յ. Պապեան՝ Լօս Անճէլըսէն, եւ բոլոր դրացիները: Զապէն յետոյ Մատաչեանի եւ Լեւոնի նուազը ուրախ պահեց ներկաները: Փոքրիկ Անդրանիկ պարելով քանի մը վայրկեանի մէջ 7 տոյլը դոյացուց «Ծօլաւ»-ի համար: Երկու ներ ուշ առեւ զո՞ տղաւորութեամբ մեկնեցան:

*** **Այցելու հիւրերը յաջորդ օրը այցելեցին Կոստ Մահլան՝ Փեռայ Մատաչեանի աղաքակը, ուր հաճելի ժամանց մը վայելեցին ներկաները եւ «Ծօլաւ»-ի նուիրեցին 10 տոյլը:**

Կ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱԼԷՊ. — ԳՏ տարեկան ծերունի Տիկ. Եւա Թաճեան իր մահկանացուն կնքեց Օգոստ. 3ին: Հանգուցեալի թաղման ներկայ էին բոլոր հայրենակիցները: Միւրթաբութիւն կը հայցենք բոլոր ազաւոր պարագաներուն:

*** **Մեր հայրենակից Պրն. Յարութիւն Միքայէլեան** քոյրը Եղա, որ Տիգրանակերտ կը մնար, վերջերս Հալէպ եկաւ իր աղջկան եւ երկու թոռներուն հետ: Այս դժբախտները օգնութեան կարօտ վիճակի մէջ կը գտնուին: Կր խնդրենք որ իրենց պարագաները օգնութեան հասնին մեր այս կարօտ հայրենակիցներուն:

*** **Օգոստ. 3ին Տէր եւ Տիկին Աւետիս Մուրատեան** ջիկ զաւակով մը բախտաւորուեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

Մ. Թ. ՓՈԽՍՈՒԷԱՆ

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ

Զնուելի վերաշինաց Միութեան Նիւ Եորքի մասնաճիւղին վարչութիւնը հանգուցեալ Մայր Տիրուհի Մաթնանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի ի նպատակ Միութեան շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները:

Միհրան Անթոյեան	1.00
Յակոբ Մեսրոպեան	1.00
Անդրէաս Մինասեան	2.00
Սաչատուր Էդգէրեան	2.00
Սարգիս Փինաճեան	1.00
Պետրոս Ստեփանեան	2.00
Մովսէս Գալստեան	2.00
Մարտիրոս Բարունակեան	2.00
Պետրոս Զարիֆեան	3.00
Սաչատուր Պուճիգանեան	5.00
Միհրան Նուրիկեան	2.00
Պաղտատար Քէհեախաչոյեան	2.00
Լեւոն Գաղանճեան	2.00
Տիգրան Սանտայեան	2.00
Կիւրեան Եղբարք	5.00
Սեդրակ Փիլօեան	3.00
Տէր եւ Տիկին Ա. Ստեփանեան	2.00
Օր. Մարգրիտ Ստեփանեան	1.00
Բենիամին Նուրիկեան	2.00
Պաղտատար Կակոյեան	3.00

45.00

Ընդհանուր գումար՝

Վարչութիւնն իր շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր նուիրատուներուն եւ իր խոր ցաւակցութիւնը՝ հանգուցեալի բոլոր պարագաներուն:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ